ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«02» դեկտեմբերի 2020 թվականի N: 370-Ա ք.Գյումրի

ՆԱՐԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 6-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 69-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման հավելվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Նարինե Մուշեղյանի 2020 թվականի նոյեմբերի 25-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ախուրյանի թիվ 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարինե Մուշեղյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդից 15 աշխատանքային օր՝ 2020 թվականի դեկտեմբերի 1-ից 21-ը ներառյալ:
2. Նարինե Մուշեղյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ախուրյանի թիվ 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել նույն կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Արաքսիա Սիրեկանյանին:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է